

Այսոց Բնական նշանները :

() Գոտոս :

Այ ամիսը պտղաւէտ ամիս է , գեղեցիկ ինծորներով ու տանձերով կը զարդարուի : Ասի կը բերէ մեզի ծիրան յետոյ անուշահամ դեղձեր տեսակ տեսակ , վերջը կամաց կամաց կուգան սեխը և ձմերուկը , վարունգը ու լոպիան , դդմը և ասոնց նման զովարար բոյսերը :

Պաշտային աշխատութիւնը աս ամսուս մէջ ալ գեռ չըմբննար :

Մնուս սկիզբները կը հնձեն վուշը և կանեփը ու կը փտտեցնեն . վուշը փտտելէն վերջը կը չորցնեն արևու մէջ , ու մէկ գործիքով մը վրայի կեղևները կը զատեն մէջի փայէն :

Այ ամսուս մէջ ապրիլն ու մայիսին մէջ ցանուած սիսեռները , բակլաներն ու լոպիան կը ծեծեն կը ժողվեն :

Պարտիզպանը զանազան սողաններ կը տնկէ զգուշութեամբ :

Ղըցանէ բարդ հազարը , կը զատեն եխուրը , ակօսներուն մէջ , ու լաւ կը ջրէ զանոնք :

Աղերդակն , ալ տնկելու ատեն կը նայի որ տունկերը մէյմէկ ոտքի չափ մէկմէկէ հեռու ըլլան :

Այսպէս պէտք է որ մարդս առաջուց հոգայ իր ապագան :

Այ ամսուս օրերը պայծառ են , օդերը տաք . բայց թէ պայծառութիւնը և թէ տաքութիւնը ամսուս հետ կը նուազին , ու տարևոյն վերջի զօրաւոր օրերը կընան ըսուիլ :

Ընդ հովանեաւ վարսագեղին դալարոյ Յորմէ չկարէ զեփիւռ ՚ի սպառ սալ հրաժեշտ Յարասուսութում հովիտ թևոց ուռենւոյ Ելեալ նըստողք յերեկորեայ ձեմն ՚ի հեշտ : Աստ , Գրիգորէ , կանգնին պատուար մեղ մայրիք Սաղարթապատ զբահաւորը դէմարտուն , Աւստի հազիւ շրջնիջէ սիւղ խաղաղիկ Ի գաշն և հեզ խառնեալ հաւուց ճրուուողիւն :

Ահա բացուած հօտք և նախիրք գան ՚ի տես , Եւ կամնածոր կովուց պրտուշիք լիատսին , Կորանայ մշակն ամեալ զհեքովք թաւ տերես , Խայտախարի որթոց զբնգալք աստանդին :

Ահա երեկն ընդ վախտ ամեոց բոցադէզ Իջեալ սահի , ձեր արդարև թանկագին . Եւ ըզներբին թողեալ կանանն ասպարէզ՝ Բաջերդն հաւիկ ընու շնչով զովագին . . .

Ի վու ընու . . . յարեաւ անուտ հարցուկն այն ՚ի սա ,

Ի յոգ և յոտ ոլորէ դձայն երերուն , Ի աշնակութիւնք կամեն լեղուէն մեղրահոս . Սերտ չըգիտէ զնէ յինքն աղէ այն թուշուն :

Ո՛վք հրաշք , հանուց բնութեանց սոսիկան , Որ յարեգակն ՚ի նոյն բառեակ ծնանիս դէմն , Եւ խռովես յերբ փոյ հաւու զսիրտ մարդկան Եւ ՚ի զգալեացս յիմանալեաց հանես ձեմն :

Ընդեպիք հողք , շարժեպիք ծառք սաղարթունք ,

Ալք զայն կալեալ էէք դետք ՚ի ծով . Եւ յամանակն իջէք աշունք և գարունք , Զի ամենայն տարուբերի Աստուծով :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՏԵՐԱԿՈՒԹԻՒՆ

Զ .

Տղոց սովորական ախորժիկն ու պակասութիւնները :

Ա . Հպարտութիւն . Այսիկայ ամէն ախտերէն աւելի վնասակար է . վասն զի բոլոր ուրիշ ախտերը մոռցնել կուտայ մարդուս : Այ ախտը հպարտութեան հակամէտ եղող սողոց սրտէն խլելու համար՝ պէտք է միշտ իրենց տկարութիւնն ու ողորմելիութիւնը առջևնին դնել , ու միշտ խոնարհեցնել զիրենք : Պարձեալ զիրենք գովելէն զգուշանալու է , և թէ որ պէտք ըլլայ գովել՝ պէտք է նայիլ որ չափը չանցնի . վասն զի գովեստը հպարտութեան գլխաւոր սնունդն է : Հպարտութեան աղբիւրն է անձնասիրութիւնը , որ պզտիկուց չափաւորելու է՝ տղուն պակասութիւնները իրեն միտքը ձգելով . օրինակի համար , տղուն կարողութեանէն վեր բան մը ապրսպրէ իրեն ու թող որ կրցածին չափ աշխատի , ու երբոր յուսահատի ու զքեզ օգնութիւն կանչէ՝ ան ա-

1 Մարուս : 2 Բեւեկիւն : 3 Երպան մարուս :